

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա		[3] Համար	
19	Մայիս	2020 թ.				Բ		4190374459	
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի			
19	Մայիս	2020 թ.				Սերիա		Համար	
						Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ			
Պայմանագիր			[5] Կերման ամսաթիվ			[6] Համար			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)									

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	3	5	3	8	1	1	2
[9] Անվանումը		«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)										
[10] Բանկային տվյալները		Ամերիաբանկ ՓԲԸ			N 1570015111280200							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)		Յրդ միկ. շրջ. 23 18										
[12] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի												
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	5	0	6	6	3	4
[14] Անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ										
[15] Բանկային տվյալները		ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.			N 900011180081							
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5										
[17] Լրացուցիչ տվյալներ												
[18] Ում միջոցով		Անուն, ազգանուն										
		Լիազորագիր		Համար								
				Ամսաթիվ								

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը					
№ ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Հաշիվ միավորը	Ընդամենը ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Հայերեն-արաբերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	2900	2900
2	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	13	1000	13000
3	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	2400	7200
4	Հայերեն-արաբերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	2900	2900
5	Հայերեն-արաբերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	2900	5800
6	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հսկատակը	ժամ	5.43	5000	27150
7	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հսկատակը	ժամ	1	5000	5000
8	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	4	1000	4000
9	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	30	1000	30000
10	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	17	1000	17000
11	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	26	1000	26000
12	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	5	1000	5000
13	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	8	1000	8000
14	Ուկրաիներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2	2900	5800
15	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	1	2400	2400
16	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	6	1000	6000
17	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	1000	3000
18	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	24	1000	24000
Ընդամենը					195150

19/05/2020 17:05:19

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«23» 01 2020թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով ՎԱՀԻԿ ՎԱՀԱՆԻ ԶԱԽԱՐՅԱՆՑԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

02.02.2011թ. ՀՀ ԱԳՆ միջոցով ԱՄԷ-ից ստացվել է ՎԱՀԻԿ ՎԱՀԱՆԻ ԶԱԽԱՐՅԱՆՑԻ վերաբերյալ փաստաթղթերը:

Կոտայքի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 20113211 քրեական գործն ու իրականացվել է նախաքննություն:

06.06.2012թ. ստացվել է հիշյալ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը:

ՀՀ ԱԳՆ միջոցով ստացվել է ՄԱԷ իրավասու մարմինների խնդրանքը՝ հիշյալ քրեական գործով վերջնական որոշման մասին տեղեկություն հայտնելու վերաբերյալ:

ՀՀ և ՄԱԷ միջև քրեական գործերով իրավական աջակցության ցուցաբերումն իրականացվում է «ՀՀ և ՄԱԷ միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» Պայմանագրի համաձայն: Համաձայն հիշյալ Պայմանագրի 13-րդ հոդվածի դրույթների՝ Կողմերը հաղորդակցվում են հայցող Կողմի պաշտոնական կամ անգլերեն լեզուներով:

Նկատի ունենալով, որ ՄԱԷ իրավասու մարմինների կողմից հայցվող տեղեկությունն անհրաժեշտ է թարգմանել արաբերեն, իսկ ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ունի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով «ՀՀ և ՄԱԷ միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» Պայմանագրի 13-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՎԱՀԻԿ ՎԱՀԱՆԻ ԶԱԽԱՐՅԱՆՑԻ վերաբերյալ ՄԱԷ իրավասու մարմինների կողմից հայցվող տեղեկության (Կոտայքի մարզի դատախազության 26.12.2019թ. գրության) արաբերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել

ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ (« քաղաքացու անձնագիր AP 0625401, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ «ԱՆ վկայական N-20) և նրան պարզաբանել « քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ « քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ « քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:


« Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ



Ա. Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, « քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարտականությունների մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆ



«23» 01 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24 հունվարի 2020թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող Կարապետ Կրբաշյանի հանձնման միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2019 թվականի նոյեմբերի 7ին, Երևան-Կիև թիվ 612 չվերթի հաշվառումից հետո հայտնաբերվել և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության „Զվարթնոց„ օ/կ գծային բաժին բերման է ենթարկվել ՌԴ քաղաքացի Կ.Մ.Կրբաշյանը, ով 2019 թվականի հոկտեմբերի 10-ից հետախուզվում է ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի մարզի, Ապշերան շրջանի ՆԳԲ-ի կողմից, ՌԴ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի Ա, Բ կետերի /շորթում/ հատկանիշներով:

2020 թվականի հունվարի 8-ին ստացվել է Կարապետ Կրբաշյանի հանձնելու մասին ՌԴ գլխավոր դատախազության միջնորդությունը՝ կից փաստաթղթերով՝ ռուսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Հմայակ Ստեփանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարապետ Կրբաշյանի հանձնման մասին միջնորդության և կից փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հմայակ Ստեփանյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AM0679214, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Դատախազ



Ա.Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Հմայակ Ստեփանյան



«24» 01 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

10. 02. 2020թ.

ք. Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դ.Մելքոնյանս, ուսումնասիրելով ՆՈՐԱՅՐ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 14107109 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ Ն.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ հայտնաբերվել է Ֆրանսիայի Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունից ստացվել են Ն.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ գերմաներեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Հիշյալ կոնվենցիային Ֆրանսիայի Հանրապետության կառավարության կողմից արված հայտարարության համաձայն՝ հարցումը և կից փաստաթղթերը պետք է ուղեկցվեն ֆրանսերեն կատարված թարգմանությամբ:

Նկատի ունենալով, որ Ֆրանսիայի Հանրապետության հասցեագրված Ն.Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման հարցումը ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել ֆրանսերեն, իսկ Ալինա Վարդանի Խաչատրյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՆՈՐԱՅՐ ՌԱՖԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հանձնման հարցման ֆրանսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ալինա Վարդանի Խաչատրյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AR սերիայի №0537421, դիպլոմ AD № 041130) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանիչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանիչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանիչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:


ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Դ.Մելքոնյան



Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարտախանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«...10...» 02 2019թ.

Ա.Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«10» 02 2020թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով 21/32-39-14 վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ, ԽՈՍՐՈՎ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ և ՍԵՄՅՈՆ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ վերաբերյալ ՀՀ ԱԳՆ միջոցով ԱՄԷ իրավասու մարմիններից ստացված միջնորդության հիման վրա 27.05.2014թ. ՀՀ իրավասու մարմնի կողմից հարուցվել է թիվ 61202814 քրեական գործը՝ ԱՄԷ Դուբայ քաղաքում տեղի ունեցած դեպքի առթիվ:

ՀՀ ԱԳՆ 24.01.2020թ. գրությամբ ստացվել է ԱՄԷ իրավասու մարմինների խնդրանքը՝ հիշյալ քրեական գործով վերջնական որոշման մասին տեղեկություն հայտնելու վերաբերյալ:

ՀՀ և ԱՄԷ միջև քրեական գործերով իրավական աջակցության ցուցաբերումն իրականացվում է «ՀՀ և ԱՄԷ միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» Պայմանագրի և «ՀՀ և ԱՄԷ միջև հանձնման մասին» Պայմանագրի համաձայն: Համաձայն հիշյալ Պայմանագրերի՝ համապատասխանաբար՝ 13-րդ և 6-րդ հոդվածների դրույթների՝ Կողմերը հաղորդակցվում են հայցող Կողմի պաշտոնական կամ անգլերեն լեզուներով:

Նկատի ունենալով, որ ԱՄԷ իրավասու մարմինների կողմից հայցվող տեղեկությունն անհրաժեշտ է թարգմանել արաբերեն, իսկ ՄԱՐԱԼ ՉԱՔԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով «ՀՀ և ԱՄԷ միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին» Պայմանագրի 13-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ, ԽՈՍՐՈՎ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ և ՍԵՄՅՈՆ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ վերաբերյալ ԱՄԷ իրավասու մարմինների կողմից հայցվող տեղեկության (ՀՀ գլխավոր դատախազության մարդու սեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության 03.02.2020թ. գրության) արաբերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես

Թարգմանիչ հրավիրել ՄԱՐԱԼ ԶԱԲԱՐՅԱՆԻՆ (<< քաղաքացու անձնագիր AP 0625401, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ << ԱՆ վկայական N-20) և նրան պարզաբանել << քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ << քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ << քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

<< գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ



Ա.Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, << քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարտախանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՄԱՐԱԼ ԶԱԲԱՐՅԱՆ



«10» 02 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«05» մարտի 2020թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Լ.Մանուկյանս, ուսումնասիրելով Լիբանանի Հանրապետության (ԼԻ) իրավասու մարմիններին հասցեագրված՝ թիվ 62229318 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Թիվ 62229318 քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել դիմել (ԼԻ) իրավասու մարմիններին քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությամբ: Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՀՀ ԳԴ ԱԱԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության 03.03.2020թ. գրությունն ու արաբերեն թարգմանված՝ քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությունը:

ԼՀ իրավասու մարմիններին քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին միջնորդությունները ՀՀ իրավասու մարմնի կողմից ուղարկվում են միջազգային իրավունքի «Բարի կամքի» և «Փոխադարձության» սկզբունքների, ինչպես նաև ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի», «Անդրազգային հանցավորության դեմ պայքարի» մասին Կոնվենցիաների հիման վրա, որոնց համապատասխանաբար՝ 46-րդ հոդվածի 14-րդ մասի և 18-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ միջազգային-իրավական համագործակցության ոլորտում պետությունները միմյանց դիմում են Հայցվող կողմի համար նախընտրելի լեզվով: ԼՀ իրավասու մարմինների հետ քրեական գործերով համագործակցության ընթացքում Լիբանանյան կողմը պահանջել է իրեն հասցեագրված միջնորդություններն ու կից փաստաթղթերն տրամադրել արաբերեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ստացված թիվ 62229318 քրեական գործով իրավական օգնություն հայցելու մասին արաբերեն թարգմանված միջնորդությանն անհրաժեշտ է կցել ԼՀ իրավասու մարմիններին հասցեագրված ՀՀ գլխավոր դատախազության կից գրության արաբերեն թարգմանությունը, իսկ ՄԱԲԱԼ ԶԱՔԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 62229318 քրեական գործով ԼՀ իրավասու մարմիններին հասցեագրած ՀՀ զլխավոր դատախազության գրության արաբերեն թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ (ՀՀ քաղաքացու անձնագիր AP0625401, ՀՀ ԱՆ վկայական՝ տրված 09.02.2015թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական

համագործակցության վարչության պետի տեղակալ




Լ. Մանուկյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

ՄԱՐԱԼ ԶԱՔԱՐՅԱՆ



05.03.2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

« 06 » մարտի 2020թ.

ք. Արուսյան

Կոտայքի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Լ. Ա. Նիկողոսյանս, ուսումնասիրելով Արտեմ/ Արտյոմ/ Առաքելյանի՝ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմիններին հանձնելու մասին ՌԴ գլխավոր դատախազությունից ստացված հարցումը և կից փաստաթղթերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2019թ. հոկտեմբերի 2-ին, ժամը՝ 13:50-ին, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի աշխատակիցների կողմից Ծաղկաձոր քաղաքի Մորի Պլազա մասնաշենքի 29-րդ բնակարանից բերման է ենթարկվել և ձերբակալվել ՌԴ իրավասու մարմինների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի և 228.1-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» և «գ» կետերի հատկանիշներով / թմրանյութեր կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը կամ իրացնելը / հետախուզվող Արտյոմ/ Արտեմ/ Առաքելյանը/ծնված 16.04.1995թ./:

Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված գրության՝ Արտյոմ Առաքելյանին ՀՀ քաղաքացի համարելու հիմք առկա չէ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 04-ի ԿԴ3/0010/06/19 որոշմամբ բավարարվել է Կոտայքի մարզի դատախազության միջնորդությունը և Արտյոմ Սուրենի Առաքելյանի նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 40 օր ժամկետով:

01.11.2019թ. ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել է Ա.Առաքելյանի հանձնման մասին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության միջնորդությունը:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2019թ. նոյեմբերի 09-ի թիվ ԿԴ3/0010/06/19 որոշմամբ բավարարվել է Կոտայքի մարզի դատախազության միջնորդությունը և Արտյոմ Առաքելյանի նկատմամբ կիրառվել է հանձնման նպատակով կալանավորում՝ 2 ամիս ժամանակով, որը դատարանի 2020թ. հունվարի 06-ի որոշմամբ երկարաձգվել է մինչև 2020թ. մարտի 11-ը:

2020թ. փետրվարի 27-ին միջնորդություն է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Արտյոմ Առաքելյանի՝ հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, որի կապակցությամբ, քանի որ վերջինս չի տիրապետում հայերեն լեզվին, ուստի անհրաժեշտ է դատական նիստի քննությանը ներգրավել թարգման:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ Արինե Հարությունյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 04-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արտեմ/ Արտյոմ/ Առաքելյանի՝ կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դատական նիստին ռուսերեն լեզվի բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել «Արինե Հարությունյանի/ անձնագիր՝ AN 0745803, տրված՝ 09.12.2013թ., 001-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ./ և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին.

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Կոտայքի մարզի
դատախազության դատախազ՝




L. Նիկողոսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



« 06 » 03 2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

12 մարտի 2020թ.

քաղաք Երևան

«Ղ գլխավոր դատախազության « հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Մարգարյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 62204920 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

« հատուկ քննչական ծառայությունում քննվող թիվ 58173719 քրեական գործով 2019 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 14:20-ին, « քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը կատարելու կասկածանքով ձերբակալվել է Արմեն Սերգեյի Թավադյանը:

Նախաքննությամբ ձեռք բերված ապացույցները բավարար գնահատելով՝ վարույթն իրականացնող մարմինը 2019թ. դեկտեմբերի 25-ին Արմեն Թավադյանին « քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրել:

Նույն օրը վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Ա.Թավադյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

2019թ. դեկտեմբերի 25-ին մեղադրյալ Ա.Թավադյանի պաշտպան Մ.Մարտիրոսյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ Ա.Թավադյանի ձերբակալումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով:

2019թ. դեկտեմբերի 26-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը քննության առնելով պաշտպան Մ.Մարտիրոսյանի ներկայացրած բողոքը և վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված վերոգրյալ միջնորդությունը, որոշում կայացրել պաշտպանի ներկայացրած բողոքը մերժելու, իսկ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարելու մասին և Ա.Թավադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը 2 ամիս ժամկետով:

Նույն որոշմամբ դատարանը մերժել է պաշտպանության կողմի միջնորդությունը կալանավորումը գրավով փախարհինելու մասին՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վերոգրյալ դատական ակտի դեմ մեղադրյալ Ա.Թավադյանի պաշտպան Հ.Խուրդյանի կողմից բերվել է վերաքննիչ բողոքը, որը վերաքննիչ քրեական դատարան 2020թ. հունվարի 20-ի որոշմամբ մերժվել է:

Նախաքննության ընթացքում որոշում է կայացվել Վարուժան Մկրտչյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրան մեղադրանք է առաջադրվել « քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով:

Վարույթն իրականացնող մարմնի համապատասխան միջնորդության հիման վր Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թ. փետրվարի 19-ի որոշմամբ բավարարել է քննիչի միջնորդությունը և Ա.Թավադյանի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացրել է 2 ամիս ժամանակով:

Հիշյալ որոշումը պաշտպանական կողմը 2020թ. փետրվարի 26-ին բողոքարկել է « վերաքննիչ քրեական դատարան:

2020 թվականի փետրվարի 26-ին որոշում է կայացվել թիվ 58173719 քրեական գործից մեղադրյալներ Արմեն Թավադյանի և Վարուժան Մկրտչյանի նկատմամբ գործն անջատելու և թիվ 62204920 համարով նախաքննությունը շարունակելու մասին:

Թիվ 62204920 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է 2020թ. մարտի 9-ին:

2020թ. մարտի 11-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է Ա.Թավադյանի պաշտպանների կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.02.2020թ. որոշման դեմ բերված բողոքը և նրան կալանքից ազատ է արձակել:

2020թ. մարտի 12-ին որոշում է կայացվել մեղադրյալ Ա.Թավադյանի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու վերաբերյալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Արմեն Թավադյանը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար ու նշված փաստաթղթերը հայերենից ռուսերեն թարգմանելու, ինչպես նաև մեղադրյալ Ա.Թավադյանի հետ դատավարական գործողություն կատարելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանին (Անձնագիր՝ AC0467587, տրված 041-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.):

Արինե Հարությունյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:


Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով, 275 հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 62204920 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանին (Անձնագիր՝ AC0467587, տրված 041-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.)՝ գրավոր և բանավոր թարգմանություն կատարելու համար:

2. Արհեստ Հարությունյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:
3. Արհեստ Հարությունյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ՀՔԾ մինչդատական վարույթի
օրինականության նկատմամբ հսկողության
վարչության դափախագ


 Ա.Մարգարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Արհեստ Հարությունյան

« 12 » 03 2018

ՈՐՈՇՈՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

16 մարտի 2020թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա.Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող Դենիս Պոպովչենկոյի կալանավորման միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

